

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/60 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	Ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
6	Չաբոտա Լայթ	ՉԱԲՈՏԱԴԵԶ	Որպես ազդող նյութ պարունակում է ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ (0,2%), պոլիհեքսամեթիլենգլանիդինի հիդրոքլորիդ (0,2%), N,N-բիս-(3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին (0,15%) , ինչպես նաև ոչ իոնոգեն մակերեսային ակտիվ նյութեր , մաշկը խոնավացնող և խնամող բաղադրիչներ, ֆունկցիոնալ հավելումներ, ապաիոնիզացված ջուր: Չի պարունակում սպիրտ: Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի միկոբակտերիան՝ թեստավորված Mycobacterium terrae-ի վրա, բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների հարուցիչների՝ թեստավորված Pseudomonas aeruginosa, Staphylococcus aureus-ի վրա (մեթիցիլինկայուն, պենիցիլինկայուն և վանկոմիցինկայուն շտամների) , աղիքային վարակների՝ թեստավորված Escherichia coli, Salmonella typhimurium-ի վրա, հատուկ վտանգավոր վարակների՝ ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և այլ, լեգիոնելոզի հարուցիչները), վիրուսների (ներառյալ ռինովիրուսները, նորովիրուսները, ռոտավիրուսները,

ադենովիրուսները, կորոնավիրուսները, «ատիպիկ թոքաբորբի» (SARS) վիրուսները, ընդերային և արտաընդերային հեպատիտները, այդ թվում՝ Ա, Բ, Ց, Ե հեպատիտի, պոլիոմիելիտի, Կոքսակի էնտերովիրուսները, ECHO, ՄԻԱՎ վիրուսները, գրիպի, այդ թվում՝ H1N1 և H5N1, պարագրիպի, կարմրուկի վիրուսները, ՍՇՎՎ հարուցիչների, ցիտոմեգալովիրուսային վարակի, հերպեսի, Էբոլա և այլ վիրուսները), Կանդիդա, Տրիխոֆիտոն ցեղի սնկերի, դերմատոֆիտների և բորբոսասնկերի նկատմամբ:

Հակավիրուսային և հակասնկային ազդեցությունը՝ մինչև 5րոպե:
Հակատուբերկուլյոզային ազդեցությունը՝ մինչև 10 րոպե: Միջոցն օժտված է երկարաձգված հակամանրեային ազդեցությամբ՝ առնվազն 6 ժամ: Միջոցն ակտիվորեն քայքայում է մակերեսների կենսաբանական թաղանթները, օժտված է լավ լվացող և ճարպագերծող հատկություններով, մշակումից հետո լվացում չի պահանջվում: Որպես ախտահանիչ միջոց՝ միջոցն օգտագործում են արագ ախտահանման և մաքրման համար՝ շփման և ոռոգման եղանակներով: Ախտահանիչ միջոցը նախատեսված է ինկուբատորների, կուվեզների, տրանսպորտային ինկուբատորների, անհասների և նորածինների համար նախատեսված վերակենդանացման բաց համակարգերի և վերակենդանացման համալիրների արագ ախտահանման, շենքերում ոչ շատ մեծ և դժվարհասանելի մակերեսների, ապարատների և սարքավորումների (այդ թվում թոքերի արհեստական շնչառության ապարատների, անեսթեզիայի սարքավորումների) մակերեսների, օպտիկական սարքերի (այդ թվում գերձայնային հետազոտության տվիչների, ՌԷՁ հետազոտության ներդիտակների), անջրաթափանց ներքնակի ծածկոցների, ռետինե, պոլիպրոպիլենե և պլաստիկ գորգերի և այլնի (այդ թվում արյունով և այլ կենսաբանական արտադրություններով աղտոտված մակերեսների լվացման հետ համակցված) ախտահանման համար: Փաթեթավորումը՝ 750 մլ ծավալի պոլիէթիլենային տարա՝ ցողացրիչով: Ունի որակի հավաստագիր, ԵԱՏՄ պետական գրանցման վկայական, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական

				հրահանգ:
--	--	--	--	----------

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЭЦЧ-ЕЦДЦПЗР-25/60 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
6			